զթուղտս կոկեաց և զկապն ուսոյց մեզ և հայրաբար գթով խնամէ զմեզ...

Եղև զրաւ սորա ի թուականիս հայոց ՉԼԴ (=1485) յամ-ռեանն ապրիլի ԺԸ.» (C. G. էջ 25)։

ԱՒԵՏԻՍ ԵՊՍ. ՍԱՍՈՒՆՑԻ, Մբ.—Կնիքը 1754, Սսոյ Թէոդորոս կթղի. օծման կը մասնակցի 1784ին, Կ. Պոլսոյ Ս. Աստուածածին եկեղեցիի մէջ, խորհրդական 1793ին, կը վախճանի 1802ին։

ԱՒԵՏԻՍ ՎԱՆՑԻ, Թարգման.—1796ին, իր ծախքով չինել կուտայ Ս. Գլխադրի դասին երկաթեայ տրապէզները, ըստ իւր յիշատակարանի, ինչպէս նաև Ս. Հրեշտակապետաց վանքին աւագ սեղանի խաչկալն և նոյն վանաց Ս. Հռիփսիմէի պատկերն, ըստ արձանագրութեանց։ Կը պաշտօնավարէր Պետրոս Եւդոկիացի և Թէոդորոս Վանցի պտրքց. օրով (ՄՁ. Թ. 85)։

ԱՒԵՏԻՍ ԿԹՂ.—1599ին աթոռակից Դաւիթ Դ. Վաղարշապատեցիի, 1613ին կ'այցելէ Ս. Յակոբի վանքը եպիսկոպոսական ձեռնադրութեան համար, միաբանութեան և իշխանաւորաց հրաւէրով. ինչպէս կը վկայէ Նազարէթ դպիր իր Պատմ. եւ Վարք Գր. Պտրք Պարոնտէրի գրուածին մէջ (ՄՁ. Թ. 322). «Եւ յորժամ տեսին ազգս Հայոց զհաւատարիմ ծառայութիւն սորա (Պարոնտէրի) որ վասն Ս. Երուսաղիմայ, ապա ՌԿԲ (=1613) թվին հարկ ի վերայ եդին և կոչեցին զառաքինի Աւետիս կաթողիկոսն Ս. Էջմիածնայ, եւ բազում վարդապետք ընդ նմա եւ ետուն զնա ձեռնադրել եւ օրհնել արքեպս. Ս. Երուսաղէմայ»։ Գաղատիոյ վանքի Մատենադարանին Ձեռագրին մէջ (Թ. 128, էջ 273) կը գտնուի Աւետիս կթղի. Երուսաղէմէն ղրկած մէկ կոնդակի օրինակը որուն մէջ կը յիշէ 1613ին, իր Ս. Յակոբ վանքն այցելելը և Պարոնտէրի եպս. ձեռնադրուիլը Ջատկի մեռելոց օրը։ Գրիգոր վրդ. Դարանաղցին ալ՝ իր Ժամանակագրութեան մէջ (էջ 286) կը գրէ. «Եւ զսա (Աւետիս կթղ.) տարեալ խօճաներն ամենեցուն միաբանութեամբ ի ս. քաղաքն յերուսաղէմ. եւ օրհնել ետուն Գրիգոր եպսն.»։ Աւետիս կթղ. վախճանած է 1620-1624ին (Ազգայմ. էջ 2341)։

ԱՒԵՏԻՔ (Մտ.), ԿԻՒԼԱՊԻ, և Մտ. ԿԻՒԼՊԷՆԿ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ԹԱԼԱՍՑԻ.—Ուխտաւորութեամբ կ'այցելեն Ս. Յակոբի